ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության փորձագետ Ժորա Ասատրյանից

Ես՝ Ժորա Ասատրյանս, ՀՀ ֆինասների նախարարության բյուջետային գործընթացի կազմակերպման վարչությունում փորձագետ աշխատում եմ 2019 թվականի սեպտեմբերի 17-ին կնքված N 95 պայմանագրի համաձայն: 2020 թվականի մարտի 18-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 17-ը ներառյալ իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

1. Մասնակցել եմ ՀՀ վարչապետի մոտ քննարկումների անցկացման նպատակով հայտատու մարմինների հետ իրենց ՀՀ 2021-2023 ՄԺԾԾ (ներառյալ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի) հայտերի, ոլորտային ԲԳԿ-ների մասով ծախսային չափաքանակների վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքներին :

2. Մասնակցել եմ ՀՀ 2021-2023 ՄԺԾԾ նախագծի (ներառյալ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին օրենքի նախագծի նախնական տարբերակը) ավարտուն տեսքի բերման աշխատանքներին:

3. Մասնակցել եմ ՀՀ ԱԺ-ում իրականացված քննարկումների արդյունքներով հայտատու մարմինների՝ 2021 թվականի բյուջետային ֆինանսավորման վերանայված հայտերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքներին:

4. Մասնակցել եմ ՀՀ վարչապետի մոտ հայտատու մարմինների մասնակցությամբ բյուջետային եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի կանխատեսումների քննարկումների համար անհրաժեշտ տեղեկանքների պատրաստման աշխատանքներին:

5. Մասնակցել եմ կրթության և գիտության, առողջապահության, սոցիալական պաշտպանության, մշակույթի և սպորտի ոլորտների օրենսդրությանը վերաբերվող նախագծերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշման ձևավորման, ինչպես նաև վերջիններիս պետական ծախսերի վրա ազդեցության գնահատման աշխատանքներին:

6. Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության պետի հանձնարարությամբ կատարել եմ վարչության ընթացիկ աշխատանքներին վերաբերվող տարբեր բնույթի այլ աշխատանքներ:

Բյուջետային գործընթացի կազմակերպման
վարչության փորձագետ

Ժորա Ասատրյան